ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱԺ Բ-01

ք. Երևան «21» դեկտեմբեր 2010թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար Գ. Ղարիբջանյանի, մի կողմից, և «Եվրոմոթորս» ՍՊԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն ՝ Ա. Եգորյանի այսուհետ՝ «Վաճառող»,մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին մատակարարել /հավելված 2/ սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված հատուկ նշանակության մարդատար ավտոմեքենա /այսուհետև՝ «Ապրանք»/, որը պետք է լինի չօգտագործված, իսկ Գնորդն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2. Վաճառողը Ապրանքը մատակարարում է Գնորդին՝ ք. Երևան, Բաղրամյան 19 հասցեով:

1.3. Սույն պայմանագրի թիվ 1 հավելվածին համապատասխան Ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվում է սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 31.01.11թ. ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Գնորդն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Վաճառողի կողմից Ապրանքի մատակարարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Վաճառողի գործունեությանը.

2.1.2. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Վաճառողի կողմից մատակարարված Ապրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված պահանջներին և /կամ/ խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը և Ապրանքը չի կարող մատակարարվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

2.1.3. Չընդունել Ապրանքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված, տեխնիկական հատկանիշով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.1.4. Մինչև Ապրանքը Գնորդին մատակարարելը հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Վաճառողին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Վաճառողին:

2.2. Գնորդն պարտավոր է՝

2.2.1. Ուսումնասիրել և ընդունել տեխնիկական հատկանիշին համապատասխան մատակարարված Ապրանքը, իսկ մատակարարման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Վաճառողին:

2.2.2. Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.4. կետով նախատեսված տույժը:

2.3. Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1. Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքը:

2.3.2. Մինչև Գնորդին Ապրանքի մատակարարելը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Գնորդին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Գնորդին:

2.3.3. Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Գնորդից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 5.4. կետով նախատեսված տույժը:

2.4. **Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1. Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ապրանքի մատակարարումը՝ ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ:

2.4.2. Սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Գնորդին պատճառված վնասները:

2.4.3. Սույն պայմանագրի 2.1.3. կետով նախատեսված դեպքում Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Գնորդին վճարել պայմանագրի 5.2. կետով նախատեսված տուգանքը:

2.4.4. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Գնորդի կրած վնասները,այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

2.4.6. Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ամբողջ ծավալով ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 24 ամիսը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները: Հետերաշխիքային սպասարկումը Վաճառողը կիրականացնի տվյալ ժամանակահատվածի համար սահմանված շուկայական գներից չորս տոկոս զեղչով:

3. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Վաճառողը Ապրանքի մատակարարման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

3.2. Գնորդն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3. Վաճառողի կողմից մատակարարված Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու /հաստատելու/ պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ /ԱՊՐԱՆՔԻ/ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի ընդհանուր գինը, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է 54 000 000 /հիսունչորս միլիոն/ ՀՀ դրամ: Գինը ներառում է

Վաճառողի կողմից սույն պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով իրականացվող բոլոր վճարները /ծախսերը/: Շահույթը կազմում է 1 /մեկ/ տոկոս:

4.2. Գնորդը սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված գումարը Վաճառողին հատկացվում է միանվագ կարգով՝ որպես 100 տոկոս կանխավճար, գումարը Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 4 /չորս/ բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 25.12.2010թ.:

4.3. Եթե սույն պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և Վաճառողը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա Գնորդը պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Վաճառողը պատասխանատվություն է կրում մատակարարված Ապրանքի որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի 0,05 %-ի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետը խախտելու դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ պայմանագրի չկատարված մասի գնի 0.05%-ի չափով:

5.4. Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 %-ի չափով:

5.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սույն պայմանագրով նախատեսված գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

7.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.5. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով՝ 4 էջից, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1 և N2 **հավելվածները** հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.6. Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	«Եվրոմոթորս» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան 19	ք. Երևան, Գ. Լուսավորիչ 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011020089	Հ/Հ 20500-22279451001
ՀՎՀՀ 00008519	ՀՎՀՀ 02540311
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն
----------	----------
/ Ա. Զարիբջանյան /	/ Ա. Եգորյան /

Հավելված N1

21,12,2010թ կնքված N ԱԺ Բ-01 ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր

N	Անվանումը	Բնութագիր
		Թեթև մետաղյա անիվներ կրկնակի ճյուղավորմամբ 234
		Բեռնախցի ավտոմատ կառավարում
		Դռների վակում
		Կլիմային հարմարվող ապակիներ /ընդհանուր/
		Հետևի կամերա
		Ապակյա էլեկտրական լյուկ
		Հակաարևային վարագույր հետևի ապակու համար
		Հակաարևային վարագույր հետևի և կողային ապակիների համար /Էլ /
		Ոտքի տակի գորգեր՝ թավշամահուդից
		Նախազգուշացնող եռանկյուն և վիրակապման նյութերով արկղ
		Ներսի և դրսի հայելի՝ ավտոմատ հակակուրացնող ֆունկցիայով
		Հարմար նստարաններ էլեկտրական դիրքափոխմամբ
		Վարորդի նստարանի էլեկտրական դիրքափոխում /հիշողությամբ/
		Հետևի նստարանների էլեկտրական դիրքափոխում
		Վարորդի և նրա կողքի ուղևորի նստարանների տաքացում
		Հետևի նստարանների տաքացում
		Փայտե ձևավորում ash grain "Fineline"
1	ԲՄՎ 750 Li Drive/F02/	BMW Individual կարդալու լույսեր հետևում
		4 գոնային կլիմատ կոնտրոլ
		Լուսային փաթեթ
		Park Distance Control (PDC)
		Հարմարվող լուսարձակիչներ
		TV ֆունկցիա
		HiFi բարձրախոսների համակարգ
		DVD Changer for 6 DVD 's
		Հետևի մոնիտոր Professional
		Հետևի և կողքի հակաարևային ապակիներ
		BMW Individual սառնարան
		Գույնը սև
		Կաշի "Dakota"
		Չօգտագործված, ավտոմեքենայի արտադրության տարեթիվը պետք է համընկնի մատակարարման տարեթվի հետ,վազքը մինչև 1000 կմ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ՝ 2 ՏԱՐԻ ԿԱՄ 100.000 ԿՄ , հետերաշխիքային սպասարկումը՝վաճառողի մոտ գործող գներից 5 % զեղչով

Անվանում	"Եվրոմոթորս" ՍՊԸ	ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմ
Հասցե	ք.Երևան, Գ. Լուսավորիչ 7	Ք. Երևան, Բաղրամյան 19
ՀՎՀՀ	02540311	3800008519
Բանկ	<Ինեկոբանկ> ՓԲԸ	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ	20500-22279451001	900011020089
Տնօրեն Ա. Եգորյան		ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար Գ. Ղարիբջանյան
(ստորագրություն)		(ստորագրություն)
Կ.Տ.		Կ.Տ.

Հավելված N2

21,12,2010թ կնքված N ԱԺ Բ-01 ծածկագրով պայմանագրի

Գնման ժամանակացույց

Հազար դրամ

N ը/կ	Անվանումը	Չափման միավորը	Քանակը: Նախատեսվում է գնել մինչև 31.01.2011թ. ներառյալ	Միավորի գինը	Ընդհանուր գումար
1	2	3	4	5	6
1	ԲՄՎ 750 Li Drive/F02/	հատ	1	54000.0	54,000.0
ԸՆԴԱՄԵՆԸ					**54,000.00**

	Վաճառող	Գնորդ
Անվանումը	"Եվրոմոթորս" ՍՊԸ	ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմ
Հասցե	ք.Երևան, Գ.Լուսավորիչ 7	Ք. Երևան, Բաղրամյան 19
ՀՀ ՀՎ	02540311	3800008519
Բանկ	<Ինեկոբանկ> ՓԲԸ	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ	20500-22279451001	900011020089

Տնօրեն *Ա. Եգորյան*

/պաշտոնը, անուն, ազգանուն/

/ստորագրություն/

ԿՏ

ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար
Գ. Ղարիբջանյան

/պաշտոնը, անուն, ազգանուն/

/ստորագրություն/

ԿՏ